Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 746 - Ա
որոշման

«ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Մայր աթոռ սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքում կաթիլային ոռոգման համակարգի ընթացիկ վերանորոգում, վնասված բույսերի փոխարինում նորով, խոտածածկ տարածքի վերականգնում, 2026 թվականի սեզոնային հողային աշխատանքների շրջանում տարածքի հողային, այգեգործական և բարեկարգման աշխատանքների ապահովում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Էջմիածին, հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	25,590,750 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Էջմիածին քաղաքի բնակչություն և Մայր աթոռ սուրբ Էջմիածնի այցելուներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Մայր աթոռ սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքի կաթիլային ոռոգման համակարգի ընթացիկ վերանորոգում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,200,000 դրամի չափով. 2) վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 6,390,750 դրամի չափով. 3) հողային և բարեկարգման սեզոնային աշխատանքներ: Նախատեսում է իրականացնել 2026 թվականի մարտի 15-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կաթիլային ոռոգման նոր համակարգի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ 1,200,000 դրամ. 2) վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնման աշխատանքներ՝ 6,390,750 դրամ. 3) սեզոնային հողային և այգեգործական աշխատանքների շրջանում հանրային տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 18,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Էջմիածնի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀԲԸՄ կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառում: Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը:

		ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ